Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 13

ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

13.12.2022 թ. ժ. 16:30 ՀՀ էկոնոմիկայի նախարարության կոլեգիայի դահլիճ

Քաղաք Երևան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

1.	Վահան Քերոբյան	Էկոնոմիկայի նախարար՝ ՓՄՁ զարգացման ենթախորհրդի նախագահ
2.	Ռաֆայել Գևորգյան	Էկոնոմիկայի նախարարի տեղակալ՝ ՓՄՁ զարգացման խորհրդի քարտուղար
3.	Արամ Սալաթյան	«Ինժեներական Ասոցիացիա» ՀԿ
4.	Գեղամ Վարդանյան	ԱՏԳ ՍՊԸ («Ինժեներական Ասոցիացիա» ՀԿ)
5.	Արամ Խաչատրյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
6.	Հայկ Չոբանյան	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպություն
7.	Էդիտա Ղազարյան	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ
8.	Հրաչյա Զաքոյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
9.	Սարգիս Ասատրյանց	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
10.	Հայկազ Ֆանյան	«Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ
11.	Լիլիթ Գևորգյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն

12.	Նիկա Մանուկովա	«Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպություն» ոչ առևտրային ասոցիացիա
13.	Սամսոն Գրիգորյան	«Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
14.	Գուրգեն Գրիգորյան	«Կառուցապատողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
15.	Կարեն Զաքարյան	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

ՀՐԱՎԻՐՎԱԾ ԱՆՁԻՔ

16.	Անի Բադալյան	Կենտրոնական բանկ
17.	Արփի Ղազարյան	Կենտրոնական բանկ
18.	Օրի Ալավերդյան	Ֆինանսների նախարարություն
19.	Լեոնիկ Հարությունյան	Պետական եկամուտների կոմիտե
20.	Լիլիթ Հայրապետյան	«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

21.	Լիլիթ Հակոբյան	Էկոնոմիկայի նախարարություն ձեռներեցության վարչության պետ
22.	Հռիփսիմե Հովհաննիսյան	Էկոնոմիկայի նախարարություն ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի պետ
23.	Թամարա Սարգսյան	Էկոնոմիկայի նախարարություն ձեռներեցության վարչության փորձագետ

24.	Վահե Մխիթարյան	Էկոնոմիկայի նախարարություն ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի ավագ մասնագետ
25.	Հովսեփ Պատվականյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ղեկավար
26.	Հայկ Մալխասյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու
27.	Դավիթ Աղաջանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ
28.	Ռուբեն Սարուխանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի տնտեսագետ, տնտեսագետ
29.	Հասմիկ Սողոմոնյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի հանրային կապերի պատասխանատու

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՐՑ 1. Հայաստանում գործող ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառման խրախուսման մեխանիզմների ներդրում

Ածանցյալների շուկան ակտիվացնելու նպատակով առաջարկվում է տրամադրել միանվագ դրամաշնորհ այն տնտեսվարողներին, ովքեր բանկերի հետ կկնքեն արժութային սվոփ, ֆորվարդ կամ օպցիոն գործարք:

ՀԱՐՑ 2. Մշակող արդյունաբերության ոլորտում ոչ ակտիվ աշխատուժից մասնագետների ներգրավման մեխանիզմների ներդրում

Առաջարկվում է ֆինանսական աջակցության միջոցով խրախուսել մշակող արդյունաբերության ոլորտում նոր կադրերի ներգրավումը՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության համար այդ ոլորտի զարգացման առանձնահատուկ կարևորությունը, կադրերի զգալի պակասը և զարգացման մեծ պոտենցիալը: Մասնավորապես,

առաջարկվում է մշակող արդյունաբերության ճյուղի գործատուներին փոխհատուցել ՀՀ ռեզիդենտ այն ֆիզիկական անձանց 12 ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի գումարը, որոնք 12 ամսվա ընթացքում անընդմեջ այդ տնտեսավարողի հետ գտնվել են աշխատանքային հարաբերությունների մեջ և աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելուն նախորդող 1 տարվա ընթացքում չեն գտնվել աշխատանքային հարաբերությունների մեջ մշակող արդյունաբերության ճյուղում գործունեություն իրականացնող որևէ տնտեսավարողի հետ:

ՀԱՐՑ 3. Բիզնեսների թվային տրանսֆորմացիայի խրախուսման մեխանիզմների ներդրում ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N1976-Ն որոշման շրջանակում

Հաշվի առնելով փոքր բիզնեսի համար նշված ծախսերի իրականացման էական դժվարությունները կամ անհնարինությունը՝ առաջարկվում է քննարկել առաջարկվող կարգավորման իրագործելիությունը, իսկ դրա ընդունման դեպքում իրականացնել օժանդակության ծրագիր, որով կմեղմվեն փոքր բիզնեսի ծախսերը: Մասնավորապես, առաջարկվում է սուբսիդավորել տեխնիկական միջոցների և ծրագրային ապահովման ծախսերը, եթե դրանք կբավարարեն որոշակի չափանիշների:

ՀԱՐՑ 4. Ինժեներական ընկերությունների կողմից օտարերկրյա հեղինակավոր ընկերությունների պատվերով նորարարական աշխատանքների կատարման և դրանց հիման վրա ապրանքների արտադրության դեպքում կանխավճարի դիմաց բանկային երաշխիքի տրամադրման խնդիրների քննարկում

Առաջարկվում է մշակել պետական աջակցության գործիք, որը կարող է լինել պետական երաշխիքի միջոցով բանկային երաշխիքի տրամադրման պարզեցման (ծախսերի նվազեցման), պետական երաշխիքի միջոցով վարկի ստացման կամ վարկի տոկոսի սուբսիդավորման տեսքով:

Նիստի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը: Պարոն Քերոբյանը շնորհավորելով Խորհրդի նորընտիր անդամներին՝ հույս

հայտնեց, որ Խորհրդի կազմի համալրմամբ առավել արդյունավետ կդառնա Խորհրդի գործունեությունը աշխատանքը:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

ՀԱՐՑ 1. Ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանի համազեկուցմամբ՝ «Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» ՀԿ գործադիր տնօրեն Կարեն Զաքարյանի ներկայացմամբ մանրամասնվեց առաջարկվող կարգավորումը, համաձայն որի նախատեսվում է որակական առումով ձևավորել արտահանելի հատվածում աշխատող տնտեսվարողների համար ավելի կանխատեսելի տնտեսական կոնյուկտուրա ածանցյալների գործիքների լայն կիրառման միջոցով, ինչպես նաև խթանել ածանցյալների շուկայի ակտիվացումը, ինչը կօգնի առևտրային բանկերին մեծ ծավալի պայմաններում ավելի ճշգրիտ գնագոյացման հաշվարկներ անել ածանցյալ գործիքների համար:

Հարցի շուրջ ակտիվ քննարկման ընթացքում ներկայացվեցին մի շարք դիտարկումներ և պարզաբանումներ, մասնավորապես տեսակետներ փոխանակեցին Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը, «Կառուցապատողների հայկական ասոցիացիա» ՀԿ-ից Գուրգեն Գրիգորյանը, Հայաստանի ներդրումային խորհրդի ներկայացուցիչները և այլ անձիք: Մասնագիտական դիտարկումներ ներկայացրեց ԿԲ ներկայացուցիչ Արփի Ղազարյանը, մասնավորապես առաջարկվող գործիքների ներդրման դեպքում շուկայում ոչ արդար գնի ձևավորման և արդյունքում տնտեսվարողների կողմից հնարավոր վնասներ կրելու մտավախությունների մասով: Միաժամանակ առաջարկվեց դիտարկվող նախագծի համատեքստում չսահմանափակել շրջանակը և բացի բանկերից ներառել նաև ֆինանսական գործիքներ առաջարկող այլ կազմակերպությունների:

ՈՐՈՇՎԵՑ

Քննարկումների արդյունքներով ՀՆԽ-ի կողմից նախագիծը կլրամշակվի՝ ընդլայնվելով միջոցառման ներքո դիտարկվող կառույցների շրջանակը և ի լրումն բանկերի, արժութային սվոփ, ֆորվարդ կամ օպցիոն գործարքների դեպքում միջոցառման իմաստով դիտարկել նաև ֆինանսական գործիքներ առաջարկող շուկայի այնպիսի խաղացողներին, ինչպիսիք են

օրինակ՝ ներդրումային հիմնադրամներն ու ընկերությունները կնքող կառույցների շրջանակը և լրամշակված տարբերակը Էկոնոմիկայի նախարարության ներկայացմամբ կշրջանառվի՝ համապատասխան շահագրգիռ գերատեսչությունների դիրքորոշումները ստանալու նպատակով:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

ՀԱՐՑ 2. Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավաբան Հայկ Մալխասյանի համազեկուցմամբ՝ Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպությունների տարածաշրջանային տնօրեն Նիկա Մանուկովան ներկայացրեց մշակող արդյունաբերությամբ զբաղվող ընկերությունների կողմից նոր աշխատողների՝ այդ թվում աշխատանքային փորձ չունեցող անձանց ներգրավման, աշխատանքային պայմաններում ուսուցման և երկարաժամկետ աշխատատեղերի ստեղծման առաջարկվող մեխանիզմները: Նիստի մասնակիցները փաստեցին, որ արդիական է բիզնես-կրթություն կապ ապահովող նախաձեռնությունը, լինի դա ԲՈՒՀ-երի, ՄԿՈՒ-ների կամ այլ կրթական հաստատությունների հետ համագործակցությամբ, քանի որ տեղական աշխատաշուկայում տարբեր մասնագիտացումներով գոյություն ունի որակյալ աշխատուժի պակաս:

Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը ներկայացրեց, որ խնդիրը և հարցի կարգավորման անհրաժեշտությունը վերհանվել է թեթև արդյունաբերության ոլորտային ռազմավարությունների մշակման համատեքստում մասնավոր ընկերություններ կատարված այցերի ժամանակ իրականացված քննարկումների արդյունքներով: Փաստացի ներկայումս ստեղծվել է մի իրավիճակ, որ աշխատուժի շարունակաբար աճող պահանջարկը հնարավոր չի լինում լրացնել՝ առանց լրացուցիչ գործնական գիտելիքների տրամադրման կամ վերաորակավորման, իսկ խնդիրն առայժմ ամբողջությամբ հնարավոր չի լինում լուծել կրթական հաստատություններ-բիզնես կապի միջոցով՝ անհրաժեշտ ինստիտուցիոնալ մեխանիզմների ոչ բավարար կայացվածության պատճառով:

Արդյունքում՝ գործատուները ստիպված են լինում ռեսուրսներ ծախսել նոր աշխատողների վերաորակավորման, կրթության և գործնական հմտություններ սովորեցնելու համար: Գործընթացն ուղեկցվում է դժվարություններով, քանի որ պոտենցիալ

աշխատողներից ոչ բոլորն են հետագայում համապատասխանում գործատուի պահանջներին, իսկ որոշ մասն էլ փորձառություն ձեռք բերելուց հետո անցնում է այլ գործատուի մոտ աշխատանքի՝ առավել բարձր աշխատավարձով: Այս խնդիրները հաճախ հետ են պահում գործատուներին՝ կադրերի պատրաստմանն ավելի մեծ միջոցներ ուղղելուց, ինչը խոչընդոտում է տնտեսական աճի պոտենցիալի ամբողջական օգտագործումը:

Հարցի վերաբերյալ տեսակետներ փոխանակեցին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պրոռեկտոր Հրաչյա Զաքոյանը, Հայկազ Ֆանյան «Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչ Հայկազ Վանյանը և այլն: Միջոցառման իրականացման ընթացքում գործատուների կողմից հնարավոր չարաշահումների մասով մտահոգությունները հայտնեց ՊԵԿ ներկայացուցիչ Լեռնիկ Հարությունյանը:

Քննարկվող հարցի համատեքստում Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը ներկայացրեց Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված և ներկայումս քննարկման փուլում գտնվող «Մասնագիտական կարողությունների զարգացում» միջոցառումը, որի նպատակն է նպաստել կազմակերպությունների արտադրողականության աճին, աշխատաշուկայում առկա և ապագա մասնագետների որակավորման բարձրացմանը, երիտասարդների գործազրկության մակարդակի նվազեցմանը և ապագայում կանխատեսվող աշխատանքային պահանջներին համապատասխան գիտելիքների և հմտությունների զարգացմանը և համաշխարհային առաջադեմ գիտելիքի հասանելիության զանգվածային ապահովմանը՝ որակավորված դասընթացների մասնակցության վճարների փոխհատուցման միջոցով:

ՈՐՈՇՎԵՑ

Հարցը քննարկել նաև Սոցիալական հարցերի և աշխատանքի նախարարության հետ, համապատասխան նպաստներին համակարգին այլընտրանք տա այն ռազմավարական փաստաթղթերի, կարճաժամկետ և երկարաժամկետ զբաղվածության ծրագրերի հետ համապատասխանեցնելու նպատակով:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

ՀԱՐՑ 3. ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի նախագահ Սամսոն Գրիգորյանի և Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ Դավիթ Աղաջանյանի զեկուցմամբ ներկայացվեց ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N1976-Ն որոշման շրջանակում բիզնեսների թվային տրանսֆորմացիայի խրախուսման մեխանիզմների վերաբերյալ ՊԵԿ կողմից շրջանառվող նախագիծը:

Մասնավորապես ՀՀ ՊԵԿ-ի կողմից հանրային քննարկման է ներկայացվել որոշման նախագիծ, որի արդյունքում ՀԴՄ կտրոնի վրա ապրանքի անվանումը և ապրանքային դիրքը, աշխատանքի կամ ծառայության անվանումը և կոդը, ինչպես նաև գնվող ապրանքի քանակը և դրա չափման միավորը պետք է տպագրեն ոչ թե նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ, այլ 24 մլն դրամ և ավելի իրացման շրջանառություն ունեցող տնտեսավարողները:

Նիստի ընթացքում հարցի վերաբերյալ տեսակետներ փոխանակեցին Էկոնոմիկայի փոխնախարար Ռաֆայել Գևորգյանը, խորհրդի անդամները, ՊԵԿ ներկայացուցիչ Լեռնիկ Հարությունյանը և այլ մասնակիցներ:

ՈՐՈՇՎԵՑ

Հաշվի առնելով այն հանգամանքը, ՓՄՁ-երի համար կարգավորման ներդրումը կարող է առաջ բերել լրացուցիչ ֆինանսական և վարչարարական խնդիրներ, մասնավորապես նոր տեխնիկական միջոցներ, դրանց կառավարման հմտություններ ձեռք բերելու, ապրանքաշարը ծրագիր մուտքագրելու և տեխնիկական միջոցների հետագա անխափան աշխատանքը ապահովելու հետ կապված, առաջարկվում է նախատեսել տնտեսվարողի համար օժանդակության ծրագիր՝ ուղղված փոքր բիզնեսի ծախսերը հնարավորինս մեղմելուն: Մասնավորապես, ֆինանսական սուբսիդավորել տեխնիկական միջոցների և ծրագրային ապահովման ծախսերը, եթե դրանք կբավարարեն որոշակի չափանիշների:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

ՀԱՐՑ 4. Ինժեներական Ասոցիացիայի ներկայացուցիչ Գեղամ Վարդանյանի և Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանի զեկուցմամբ ներկայացվեց ինժեներական ընկերությունների կողմից օտարերկրյա հեղինակավոր ընկերությունների պատվերով նորարարական աշխատանքների կատարման և դրանց հիման վրա ապրանքների արտադրության դեպքում կանխավճարի դիմաց բանկային երաշխիքի տրամադրման հետ կապված խնդիրները, որոնցով պայմանավորված Հայաստանում գործող ինժեներական ընկերությունները հաճախ հնարավորություն չեն ունենում իրականացնելու խոշոր պատվերներ, քանի որ արտասահմանյան հեղինակավոր ընկերությունների գնման մրցույթում հաղթելուց հետո բախվում են ֆինանսական խնդիրների: Դրանք հիմնականում երկու բնույթի են.

- Պատվիրատուն վճարում է կանխավճար, սակայն պահանջում է պատվերի կատարման համար բանկային երաշխիք: Հայաստանյան բանկերը երաշխիքի դիմաց պահանջում են գործարքի գնի չափով գումարի սառեցում և որոշակի տոկոս՝ որպես ծառայության վճար:
- Առանց կանխավճարի պատվերն իրականացնելու համար անհրաժեշտ են վարկային միջոցներ, սակայն անհրաժեշտ չափով գրավի առարկայի բացակայության և բարձր տոկոսադրույքների պատճառով պատվերի իրականացումը դառնում է անհնար:

Հարցի վերաբերյալ քննարկումների ընթացքում, նշվեց, որ երկու խնդիրների ընդհանրությունն այն է, որ հայաստանյան ինժեներական ընկերությունները կորցնում են միջազգային մրցունակությունը՝ անհամեմատ մեծ գին վճարելով բանկային երաշխիքի կամ ֆինանսական միջոցների ներգրավման համար: Արդյունքում՝ վերջիններս հաճախ հրաժարվում են միլիոնավոր դոլարների գործարքներից, որոնք այլ հավասար պայմաններում կարող են ապահովել ոլորտի արագ զարգացումը:

ՈՐՈՇՎԵՑ

Առաջարկվում է մշակել պետական աջակցության գործիք, որը կարող է կիրառվել պետական երաշխիքի միջոցով բանկային երաշխիքի տրամադրման պարզեցման (ծախսերի նվազեցման), պետական երաշխիքի միջոցով վարկի ստացման կամ վարկի տոկոսի սուբսիդավորման ձևով:

Նիստը նախագահող

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

X _____

_____

(ստորագրություն)

Արձանագրությունը կազմեց՝

ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊՄԵ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ